ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 119

«13» 10 2020թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 11-րդ մասերով, 23-րդ հոդվածի 3-րդ մասով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2018 թվականի ապրիլի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի գործունեության կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2007 թվականի մայիսի 31-ի N 24 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 45 հրամանի 21-րդ կետով՝

Հրամայում եմ՝

1. Դադարեցնել Արսեն Սարդարյանի անդամությունը Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի կազմում:

2. Սույն հրամանի պատճենն ուղարկել՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ